ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 183 -Ա

« 03 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ

«ՎԱՅՔԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 8-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի թիվ 874-Ա որոշման 4-րդ կետը և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2024 թվականի մայիսի 22-ի «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխությամբ պայմանավորված կանոնադրության փոփոխության պետական գրանցումը մերժելու մասին որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 13,875,000 (տասներեք միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամով: Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացումից հետո կկազմի 31,338,000 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր երեսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հունվարի 18-ի թիվ 02 որոշմամբ հաստատված կանոնադրության 4.2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 31,338,000 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր երեսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 31,338.0 (երեսուներեք հազար երեք հարյուր երեսունութ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ 1,000.0 դրամ անվանական արժեքով»:

3. Հաստատել «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում և «Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 106 որոշմամբ հաստատված «Վայքի բուժական միավորում» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 105 որոշումը:

5. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին՝ երկշաբաթյա ժամկետում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կատարված փոփոխության պետական գրանցման համար:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը:

Recoverable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր